ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

12.12.2017թ.

Հետք պարբերականի լրագրող

Սեդա Ղուկասյանին

Հարգելի Սեդա Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր 24.11.2017 թվականի տեղեկություն ստանալու հարցման վերաբերյալ գրության, հայտնում եմ, որ ՀՀ քաղաքացիների հետ հանդիպումները, ընդունելությունների կազմակերպումը բազմաթիվ են և շարունակական:

Վերջին երկու տարում հիմնականում քաղաքացիները դիմում են ինձ էլեկտրոնային եղանակով, և այդ դիմում-նամակները շատ բազմաբնույթ են ու իրենց բովանդակությամբ հարցերի լայն շրջանակ են պարունակում:

Անդրադառնամ ամենակարևորին:Այն վերաբերում է իմ վերջին օրենսդրական նախաձեռնությանը, որի հիմնական զեկուցողն եմ հանդիսացել ՀՀ Ազգային ժողովում՝ ««Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքին, որը 06.12.2017 թվականին ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Նշեմ, որ այդ օրենսդրական նախաձեռնությունը ձևավորվել էր հենց ինձ դիմած մարդկանց խնդրանքների շնորհիվ:

Պատգամավորի իմ լիազորությունների շրջանակներում օգնել եմ բոլոր այն մարդկանց, ովքեր խորհրդի կամ գործնական հարցերի լուծման առաջարկներ են ներկայացրել:

ՀՀ Ազգային ժողովի վերջին հերթական նիստերի ընթացքում առաջին ընթերցմամբ քննարկվեց և քվեարկվեց «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի համահեղինակներից և հիմնական զեկուցողն եմ եղել: Նշված ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների և տրանսպորտային միջոցների շահագործման կարգում: Ամենայն հավանականությամբ օրինագիծը երկրորդ ընթերցմամբ կընդգրկվի հունվարյան նստաշրջանի հերթական նիստում:

ՀՀ Ազգային ժողովում, կառավարության հարցուպատասխանի ժամանակ, քաղաքացիների խնդրանքով հարց եմ բարձրացրել աջակողմյան ղեկով ավտոմեքենաների շահագործումից հանելու, դրանց հետագա ճակատագրի վերաբերյալ, որը շատ մեծ հնչեղություն ունեցավ և, որի արդյունքում, կառավարությունը որոշեց այդ հարցը հետաձգել՝ ապագայում խորը և լուրջ քննարկումներ ծավալելու և խնդրին այնպիսի լուծում տալու համար, որպեսզի բավարարի մեր համերկրացիներին:

Քաղաքացիների կողմից նամակներ և դիմումներ այնքան շատ եմ ստանում և պատասխանում, որ երբեք դրանք չեմ հաշվել, բայց որևէ նամակ երբևէ անպատասխան չեմ թողել, եթե այն ուղղված է կոնկրետ ինձ:

Քաղաքացիների ընդունելություններ սահմանված կարգով իրականացնելուց բացի, հանդիպում եմ բազմաթիվ քաղաքացիների, ովքեր դիմում եմ ինձ:

Հարգանքով՝ ԿԱՐԻՆԵ ԱՃԵՄՅԱՆ